

ԱՍՏՈՒԱԾ ՀԱՄԱՏԱՑԵԱԼՆԵՐԸ ԿԸ ՓՐԿԷ ԻՐԵՆՑ ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

1.- Ձեզի մարդկային փորձութենէն գատ ուրիշ բան չէ պատահած, բայց Աստուած հաւատարիմ է, որ ձեզ պիտի չթողու, որ ձեր կարողութենէն աւելի փորձուիք, հապա փորձութեանը հետ ազատութեան միջոց մըն ալ պիտի տայ, որպէսզի կարող ըլլաք համբերել (Ա. Կորնթացիս 10:13):


2.- Ուստի, եղբայրներ, բանի որ Աստուած ա՛յնքան ողորմած եղաւ մեզի հանդէպ կ'աղաչեմ, որ դուք ձեզ Աստուծոյ ընծայէք, որպէս կենդանի գոհ մը իրեն վերապահուած, որովհետեւ ատիկա է Աստուծոյ ուզած հոգեւոր պաշտամունքը (Հոով 12:1):

3.-Տէրը գիտէ աստուածապաշտները փրկել իրենց փորձութիւններէն (Բ. Պետրոսի 2:3):

Երանի՛ այն մարդուն, որ կը տոկայ փորձութեան, որովհետեւ փորձութենէն յաղթական դուրս եկողը, որպէս մրցանակ պիտի ստանայ այն կեանքը, որ Տէրը խոստացաւ տալ զինք սիրողներուն: Բայց փորձութեան մէջ եղող ոեւէ մէկը թող չըսէ, թէ Աստուած է որ զինք կը փորձէ, որովհետեւ Աստուած մասնակից չէ փորձութիւններուն, որոնք չարէն կու գան, ո՛չ ալ ինք մարդիկը փորձութեան կ'ենթարկէ: Իւրաքանչիւր մարդ կը փորձուի իր իսկ ցանկութիւններէն տարուելով ու խաբուելով:

Կարդալ նաեւ՝ Յակոբոս 1:2-18

ԳԻՆԻ



Ամէն Ս. Պատարագէն առաջ ջահընկալը մասնաւոր բաժակով գինին կը պատրաստէ Ս. Սեղանին վրայ, որպէսզի պատարագի քահանան զայն լեցնէ սկիիին մէջ ըսելով.- «Ասիկա կը կատարուի՝ յիշելու համար մեր Տիրոջ, մեր Աստուծոյն եւ Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի փրկագործ տնօրէնութիւնը, որուն կողմէ բխած արիւնի աղբիւրէն բոլոր արարածները նորոգուեցան եւ անմահացան: Յաիտեան օրհնաբանեցէք, զովարանեցէք եւ փառաւորեցէք զայն»:

Համաձայն մեր եկեղեցոյ աւանդութեան, Ս. Պատարագի գինիի գործածութիւնը կը տարբերի Յոյն եւ Լատին Եկեղեցիներէն: Անոնք ջուր կը խառնեն գինիին, սկնարկելով թէ Յիսուսի խաչելութեան պահուն հռոմէացի զինուորը երբ գեղարդը խրեց Յիսուսի կողը, արիւն եւ ջուր հոսեցաւ:

Իսկ Հայ Եկեղեցոյ տեսակետը սոյն է, որ Յիսուս երբ հաստատեց հաղորդութեան Խորհուրդը անխառն ու անապակ գինի գործածեց:

Գինին Ի՞նչ բաներու կը գործածուի նաեւ... Ըարունակելի



ԲՈՒ ԽՍՐԷՐ ԽՍ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺՁ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 9 ՅՈՒՆԻՍ 2023 ԹԻՒ 28

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ԵՍ. 3.1-11: Հռ. 11.13-24 Ստ. 14.13-21

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՊԱՀՈՅ ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՄԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹՔՈՍԻ 14. 13-21

Երբ Յիսուս Յովհաննէսի գլխատումը լսեց, նաւակով մեկնեցաւ այդտեղէն եւ առանձին գնաց ամայի վայր մը: Շրջանի քաղաքներուն բնակիչները լսելով ասիկա, քալելով հետեւեցան իրեն: Երբ Յիսուս նաւակէն դուրս ելաւ, տեսաւ մեծ բազմութիւնը, զբաց անոնց վրայ եւ հիւանդները բժշկեց:

Երեկոյեան, իր աշակերտները իրեն մօտեցան եւ ըսին. «Ամայի տեղ ենք եւ ժամանակն ալ ուշ է: Արձակէ՛ ժողովուրդը, որպէսզի երթան շրջակայ գիւղերը իրենց համար ուտելիք գնելու»:

Յիսուս ըսաւ. «Ինչո՞ւ իրենք երթան: Դուք տուէ՛ք անոնց ուտելիքը»: Անոնք ըսին Յիսուսի. «Հոս գրեթէ ոչինչ ունինք, բացի հինգ հացէ եւ երկու ձուկէ»:

Յիսուս ըսաւ. «Հոս բերէ՛ք ատոնք»: Եւ հրամայեց, որ ժողովուրդը նստեցնեն խոտին վրայ: Ապա առաւ հինգ հացը եւ երկու ձուկը, փառք տուաւ Աստուծոյ, օրհնեց, կտրեց հացերը եւ տուաւ աշակերտներուն, որոնք բաշխեցին ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան եւ աշակերտները աւելցած կտորները հաւաքելով տասներկու սակառ լեցուցին: Իսկ ուտողներուն թիւը շուրջ հինգ հազար էր, կիներն ու մանուկները չհաշուած:

ԱՍՏՈՒԱԾ

Հաւատամքին մէջ ամէն Կիրակի կ'աղօթենք ըսելով՝ Աստուած է բոլոր տիեզերքի արարիչը, եւ Տէր Յիսուս Քրիստոսով յայտնուած եւ բացայատուած Հայր է: Ան մարդոց պէս մարմանաւոր էակ մը չէ, որ տեղ ունենայ... Հոգի է ան եւ ամենուրեք, այսինքն՝ ամէն տեղ:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՑ՝ ԵՐԿՈՏԱՍԱՆ ԱՌԱՔԵԼՈՅՆ
ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ՊՕՂՈՍԻ ԵՐԵՑԱՍԱՆԵՐՈՐԴ
ԱՌԱՔԵԼՈՅՆ

Պօղոս Առաքեալ

Քրիստոսի յարութենէն ու համ-
բարձումէն ետք ընտրուած առաքեա-
լը՝ Պօղոս առաքեալ, եղաւ քրիստոնէ-
ութիւնը տարածող եւ քարոզող մեծա-
գոյն առաքեալը: Ան իր հրէական
ծագումով, ստացած յունական կրթու-
թեամբ եւ հռոմէական հպատակու-
թեամբ, կը դառնայ ընտիր անօթ լա-
ւագոյնս տարածելու քրիստոնէութիւ-
նը այն ժամանակուան մշակոյթին
համապատասխան մօտեցումով եւ իր
հռոմէական հպատակութենէն օգտը-
ւելով:

Պօղոս առաքեալ, որ նախապէս կը
կոչուէր Սօղոս, ծնած է Կիլիկիոյ Տար-
սոն քաղաքին մէջ, բայց սնած
Երուսաղէմի մէջ, Գամաղիէի ձեռքին
տակ հրէական ճշմարիտ օրէնքով
(Գրծ. 22.3): Ան եղած է փարիսեցի եւ
թունդ ազգայնական:

Քրիստոնէական եկեղեցոյ առա-
ջին շրջանին, Պօղոսի մեծագոյն
մտահոգութիւնը կ'ըլլայ հալածել
քրիստոնէաները եւ բանտարկելով,
հրէութեան վերադարձնել զանոնք: Ան
Երուսաղէմի մէջ բոլորէն ճանչցուելով
իբրեւ հակառակորդ նոր կրօնքին, կը
խնդրէ քահանայապետէն, որպէսզի
Դամասկոս երթայ ու այնտեղ եւս հա-
լածէ քրիստոնէաները եւ բանտ նետէ
զանոնք: Սակայն Դամասկոսի ճամ-
բուն վրայ Քրիստոս կը յայտնուի իրեն
եւ դարձի կը բերէ, զինք ընտրելով
իբրեւ մեծագոյն քարոզիչը Քրիստոնէ-
ութեան:

Այսպիսով Պօղոս, այս անգամ Մե-
ծագոյն եւ ճշմարիտ Քահանայապե-
տէն առաքուելով, կը կազմակերպէ
ճամբորդութիւններ, որոնք կ'ըլլան իր
առաքելութեան ամենէն գործօն ժամա-
նակները եւ առիթները:

Ան կը հիմնէ եկեղեցիներ եւ իր
ճամբորդութիւններէն ետք նամակներ
դրկելով անոնց, կը քաջալերէ զիրենք
մնալու այն հաւատքին մէջ, որ ինք
քարոզած է իրենց: Պօղոս առաքեալի
նամակները Նոր Կտակարանին մէջ,
թիով 14 հատ են:

Պօղոս առաքեալի կատարած երեք
ճամբորդութիւններուն մասին կը պատմէ
Գործք Առաքելոց գիրքը, ուր հեղինակը
ներկայացնելով Պօղոսի վերջին ճամ-
բորդութիւնը դէպի Հռոմ, կը փակէ գիրքը:

Աւանդութեան համաձայն, Պօղոս կը
հասնի մինչեւ Սպանիա եւ ապա վե-
րադառնալով Հռոմ այնտեղ սուրով կը
նահատակուի:

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆՆ ԲԱԺԻՆ

Ի՞նչ ըսել է աստուածաշտուութիւն

Աստուածաշտուութիւն կը նշանակէ
պաշտել զԱստուած, ծառայել Աստու-
ծոյ:

Մարդիկ կը ծառայեն Աստուծոյ,
երբ կը սիրեն զայն իրենց բոլոր հոգիով
եւ կը պահեն աստուածային պատուի-
րանները եւ կ'աղօթեն անոր:

Աստուածապաշտ պէտք է ըլլանք
որովհետեւ Աստուած մեր արարիչն է,
մեր վայելած բոլոր բարիքները ան կու
տայ մեզի: Ան սիրեց մեզ եւ միշտ կը
սիրէ: Սուրբ Աւետարանին մէջ կը կար-
դանք. «Աստուած այնչափ սիրեց աշ-
խարհը (մարդկութիւնը) որ նոյնիսկ իր
Միածին Որդին տուաւ անոր համար»
(Յովհ 3.16):

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ԳՐԱՄԸ ՍԻՐՈՂԸ՝ ՉԻ ԿՐՆԱՐ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ ՍԻՐԵԼ

Տալ կարենալու համար, առաջին
հերթին պէտք է գիտնալ, որ մեր
ունեցածին տէրը Աստուած է եւ ոչ թէ
մենք: Երկրորդ, պէտք չէ կապուած
ըլլալ մեր ունեցածին: Երրորդ, պէտք չէ
սիրենք դրամը: Չորրորդ, պէտք չէ մեր
վստահութեան ու յոյսի աղբիւրը
դրամը նկատենք: Պօղոս առաքեալ կը
թելադրէ Տիմոթէոսի, որ այս աշխարհի
հարուստներուն պատուիրէ, որ շատ
չհպարտանան եւ անկայուն հարստու-
թեան չվստահին, այլ՝ վստահին
Աստուծոյ, որ ամէն ինչ առատօրէն
կու տայ մեզի, որպէսզի վայելենք
(Ա.Տմ 6.17):

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը

Մէկը՝ որ կապուած է իր ունեցած
հարստութեան, մէկը՝ որ կը սիրէ դրա-
մը, մէկը՝ որ կը վստահի իր դրամին, չի
կրնար օգնել ուրիշին: Դրամը պաշ-
տողը՝ չի կրնար բաժնուիլ անկէ:
Դրամը սիրողը՝ չի կրնար ողորմու-
թիւնը սիրել: Դրամին վստահող մար-
դը՝ չի կրնար ուրիշ մարդոց վստահիլ:
Դրամին ապաւինող մարդը՝ չի կրնար
անօգնականին ապաւեն ըլլալ: Դրամէն
զատ ուրիշ բան չտեսնողը՝ չի կրնար
տեսնել չքաւորը:

ԵՅԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

Երբ Աստուծմ օգնութիւն կ'ուզես , ԿԱՐԳ՝ ՍԱՂՄՈՍ 54

Փրկէ՛ զիս, ո՛վ Աստուած, դուն՝
որ փրկիչ ես, պաշտպանէ դատս,
դուն՝ որ հօգր ես: Լսէ՛ աղօթքս, ո՛վ
Աստուած, ակա՛նջ տուր խօսքերուս:
Ամբարտաւան մարդիկ վրաս յար-
ձակեցան, անգութ մարդիկ կ'ուզեն
վերջ տալ իմ կեանքիս, առանց
նկատի առնելու քեզ, ո՛վ Աստուած:

Բայց դուն, ո՛վ Աստուած, օգնա-
կա՛նս ես, միակ պաշտպանս ես,
Տէ՛ր: Թշնամիներու խորհած չարի-
քը դուն իրենց գլխուն թափէ, եւ
բնաջնջէ զիրենք, դուն՝ որ հաւատա-
րիմ ես: Կամատր կերպով քեզի զոհ
պիտի մատուցանեն, երախտիքս պի-
տի յայտնեն քեզի, Տէ՛ր, ինչպէս որ
կը վայելէ, որովհետեւ զիս փրկեցիր
բոլոր նեղութիւններէս, եւ ես թշնա-
միներու անկումը տեսայ:

Միշտ սաղմոս կարդանք դիմելով
Սաղմոսագիրքին

ԱՂՕԹՔ

Քեզի ապաւինած եմ, բժշկէ՛
հոգիս, որովհետեւ մեղանչեցի Քեզի
դէմ: Տէ՛ր Քու աչքիդ առջեւ են զիս
չարչարողները, եւ հանգիստ չունիմ
բացի Քեզմէ: Ապրեցո՛ւր զիս ըստ
Քու մեծ ողորմութեանդ, որովհետեւ
բոլորը յարձակած են վրաս՝
ձգտելով անձս կործանել: Փրկէ՛ զիս,
որ ամենակարող ես ու ամենագոր:

Ե. Ասորի